

Բրբենքի Դպրոցների Միացյալ Նրջան



Տեղական Հսկողության և
Հաշվետվողականության ծրագիր (*LCAP*)

LCAP նպատակ #3-ի վերանայում

Դեկտեմբերի 12, 2018

Նպատակ #3. Համապատասխանեցնել դասավանդումը և աշակերտների կրթությունը Կալիֆոռնիայի Նահանգային Չափանիշների հետ

Ընթացիկ LCAP աջակցություն
Լրացուցիչ դրամաշնորհ
Հիմնական դրամաշնորհ

Վերանայել նյութերը

Նպատակ #3.1- Շարունակել համագործակցությամբ զարգացնել, վերանայել և կատարել շրջանի ընդհանուր քննությունները, գնահատման օրենքները և համապատասխանեցնել գնահատականների թերթիկները Կալիֆոռնիայի Նահանգային Չափանիշների հետ:

Տարրական դպրոց

2017-18 ուսումնական տարվա ընթացքում, զգալիորեն պակասեցվեցին տարրական դպրոցի քննությունների թիվը, թույլ տալով ուսուցիչներին չափորոշիչ և ախտորոշիչ կերպով գնահատել իրենց աշակերտների գիտելիքները հիմնվելով չափանիշների վրա:

Շրջանի քննությունները ճշգրտված էին լայնամասշտաբ առաջընթացի վերահսկման վրա, ժամանակի ընթացքում առարնթացը ցույց տալու համար:

- 2018-19 ուսումնական տարվա ընթացքում, մենք շարունակում ենք օգտագործել առաջընթացի վերահսկումը՝ օգտագործելով ուսումնական ծրագրի վրա հիմնված քննությունները: Ստորև, ներկայացված է քննությունների գործընթացի վերափոխման ժամանակացույցը.

-**Ապրիլ 2018**- Տնորենի և ուսմասվարի առաջարկները, յուրաքանչյուր դպրոցի, քննությունների վերաբերյալ հիմնված ուսուցիչների առաջարկների վրա:

-**Օգոստոս 2018** – Շրջանի քննությունների տարեկան ակնարկները տրվել են յուրաքանչյուր դպրոցի ուսուցիչներին

- Գնահատականների թերթիկներ և գնահատման ուղեցույցներ.

-**Մարտ 2018**- Գնահատականների թերթիկները պարզաբանելու համար, Կրթական գրասենյակը բացատրական գրքույքներ պահանջեց

-**Մայիս 2018** – Շրջանայի մակարդակով մշակվեց և վերանայվեց

-**Օգոստոս 2018** – Տնորենների և ուսմասվարների կողմից վերանայվեց/հաստատվեց

-**Հոկտեմբեր 2018** – Թարգմանվել և ուղարկվել է դպրոցներին ծնողական ժողովների ընթացքում բաժանվելու համար

-**Հոկտեմբեր 2018**- 2017 թվականի գնահատականների թերթիկների վերաբերյալ հարց ու պատասխանները վերանայվել և ուղարկվել են դպրոցներին

Նպատակ #3.1- Շարունակել համագործակցությամբ զարգացնել, վերանայել և կատարել շրջանի ընդհանուր քննությունները, գնահատման օրենքները և համապատասխանեցնել գնահատականների թերթիկները Կալիֆոռնիայի Նահանգային Չափանիշների հետ:

Միջանկյալ և միջնակարգ դպրոց

- Մինչև 2017-18 ուսումնական տարվա վերջը, յուրաքանչյուր դասարան, յուրաքանչյուր առարկայից, պարտադիր կերպով, հանձնում էր ընդհանուր քննություն: Ուսումնական տարվա ընթացքում, յուրաքանչյուր դպրոցի ուսուցիչների թիմ հանդիպում, մշակում և իրագործման էր հանձնում այս քննությունները: Առարկաներից շատերի քննությունը պետք է լիներ կիսամյակի ընթացքում և վերջում: Մինչդեռ, անգլերեն լեզվի և գիտության քննությունը ընտրվեց մշակված լինել կատարողական գնահատման քննությունից, որը գնահատում էր քննադատական մտածելակերպը, ընթերցանությունը և գրավոր աշխատանքը:
- 2018-19 ուսումնական տարվա ընթացքում, այս քննություններից միայն մի քանիսը վերանայման կարիք ուներ: Միայն ֆրանսերեն 1 դասընթացը նոր վերարտադրման կարիք ուներ:
- 2018-19 ուսումնական տարվա ընթացքում, ընդհանուր քննությունները տեղափոխվեցին Schoolcity համացանցային կայքէջ, որպեսզի, պետք եղած ժամանակ, աշակերտների հանձնեն այդ քննությունները համացանցում: Համակարգչային այս քննությունների արդյունքները, շատ արագ կերպով, հասանելի են ուսուցիչներին, որոնք օգտագործում են այն լրացուցիչ օգնություն ցույց տալու և ուսուցիչներին վերապատրաստելու համար:
- Բացի այդ, միջանկյալ դպրոցի ուսուցիչները ազատված են ընդհանուր այս քննություններից, քանի որ նրանք փորձարկում են գիտության նոր դասագիրք:

Նպատակ #3.2- Շարունակել զարգացնել և իրականացնել համակողմանի կրթական համաչափ ընթացքով իրականացվող ուղեցույցներ, բոլոր աշակերտների կրթական կարիքները ապահովելու համար:

Տարրական դպրոց (շարունակվում է 2017-18 ուս. տարվանից)

- **Բենչմարկ (անգլերեն լեզվի քերականություն).** Քննությունները և չափանիշները թելադրում են համաչափությունը և ընթացքը: Ուսուցիչները իրավունք ունեն դասավանդել նյութը հաշվի առնելով, թե երբ է քննությունը հանձնվելու և երբ է դասարանի մակարդակը հասնելու պետական չափանիշներին:
- **Գո Մաթ (մաթեմատիկա).** Քննությունները և չափանիշները թելադրում են համաչափությունը և ընթացքը: Ուսուցիչները իրավունք ունեն դասավանդել նյութը հաշվի առնելով, թե երբ է քննությունը հանձնվելու և երբ է դասարանի մակարդակը հասնելու պետական չափանիշներին:
- **Հասարակագիտություն.** պետությունը ուսումնական ծրագրի նոր շրջանակի ներկայացման գործընթացի մեջ է:
- **Գիտություն.** Ուսուցիչները պետք է դասավանդեն «Հաջորդ սերնդի գիտության չափանիշները»: Ուսումնական տարվա ընթացքում, ուսուցիչները պետք է դասավանդեն ՄՏԵՄսկոպս ծրագրի 3 դաս:

Նպատակ #3.2- Շարունակել զարգացնել և իրականացնել համակողմանի կրթական համաչափ ընթացքով իրականացվող ուղեցույցներ, բոլոր աշակերտների կրթական կարիքները ապահովելու համար:

Միջանկյալ և միջնակարգ դպրոց
Անգլերեն լեզու. Միջանկյալ և միջնակարգ դպրոցների անգլերեն լեզվի ուսուցիչները իրականացնում են Կալիֆոռնիայի Հավաքածու ծրագրի առաջին տարին: Մյուս տարի, ուսուցիչների թիմը կհանդիպի դասը ծավալը և հաջորդականությունը մշակելու համար: Ջոն Բրոզ միջնակարգ դպրոցի անգլերեն լեզվի ուսուսիչներին, ուսումնական տարվա ընթացքում, համագործակցման ժամ է հատկացվել դասերը պլանավորելու համար: Տեղեկատվական այս համագործակցությունը հանգեցրեց Ջոն Բրոզ դպրոցի ուղեցույցների մշակմանը:

Գիտություն. Միջանկյալ դպրոցի գիտության ուսուցիչները, ուսումնական վերջին 3 տարիների ընթացքում, շարունակաբար հանդիպում և մշակում են դասավանդումը: Այս ժողովների ընթացքում դասի ծավալը և հաջորդականությունը մշակվել է բոլոր դասարանների համար:

Նպատակ #3.3 – Շարունակել նպաստել և աջակցել ուսուցիչների ներգրավվածությունը Կալիֆոռնիայի Նահանգային Չափանիշների կրթական նյութերի/դասագրքերի փորձարկման, ընդունման և Հատուկ Ուսուցման և Անզլերեն սովորողների ծրագրերում սովորող աշակերտների համար լրացուցիչ նյութեր հատկացնելու համար:

Տարրական դպրոց

- Անզլերեն լեզվի քերականություն (Առաջադեմ Բենչմարկ – ընդունված ուսումնական ծրագիր). Նոր ուսումնական ծրագրի իրականացման 3-րդ տարի: Ուշադրություն է դարձվելու կրթական նյութերի վրա, որոնք հիմնաված են պետական չափանիշների հանդեպ աշակերտների ունեցած կարիքների վրա
- Մաթեմատիկա (Գո Մաթ – ընդունված ուսումնական ծրագիր). Ուսումնական ծրագրի լրիվ իրագործում, շրջանի օգնությամբ, թիմային աշխատանքի միջոցով պետական չափանիշների ուսումնական ծրագիրը պլանավորելու համար, շրջանի բոլոր ուսուցիչների հետ մաթեմատիկայի դասընթացի կարիքները համապատասխանեցնելու համար:
- Հասարակագիտություն - պետությունը ուսումնական ծրագրի նոր շրջանակի ներկայացման գործընթացի մեջ է:
- Գիտություն – շարունակվում է ՍՏԵՄ սկոպս ծրագրի նյութերի փորձարկումը ընդունված նյութերին աջակցելու համար, որոնք չեն համապատասխանում NGSS-ի հետ:

Նպատակ #3.3 – Շարունակել նպաստել և աջակցել ուսուցիչների ներգրավվածությունը
Կալիֆոռնիայի Նահանգային Չափանիշների կրթական նյութերի/դասագրքերի
փորձարկման, ընդունման և Հատուկ Ուսուցման և Անգլերեն սովորողների ծրագրերում
սովորող աշակերտների համար լրացուցիչ նյութեր հատկացնելու համար:

Միջանկյալ և միջանակարգ դպրոց

Անգլերեն լեզու. Լրիվ ընդունման 1-ին տարվա ընթացքում:
Ուսուցիչներին տեղեկացվել են, որ դասավանդած նյութի
50%-ը պետք է գա ընդունված ծրագրի նյութերից:

Մաթեմատիկա. Բաժինների ժողովները տեղ և ժամանակ են
հատկացնում CPM տեքստի/ուսումնական ծրագրի
դժվարությունները
/օգտագործումը:

Հասարակագիտություն. Միջանկյալ դպրոցում փորձում են
օգտվել նոր դասագրքերից:

Գիտություն. Մյուս տարի, գիտության ուսուցիչները
կընդունեն դասավանդման նոր դասագիրք (ճիշտ է սա):

**Նպատակ #3.4 – Շարունակել խոսել Կալիֆոռնիայի Նահանգային
Չափանիշների մասին ուսումնական տարվա ընթացքում դպրոցներում
ծնողական հանդիպումների ժամանակ:**

Տարրական դպրոց

- Մաթեմատիկայի երեկոներ
- Գրագիտության երեկոներ
- Գիտական երեկոներ
- Տեխնիկական ուսումնական ծրագրի ծնողական ակադեմիայի դասընթացներ
- Սեմինար պարապմունք Անգլերեն Լեզվի Խորհրդատու Կոմիտեի (ELAC) ծնողների համար

Միջանկյալ և միջանակարգ դպրոց

ELAC ժողովներ

Բարի գալստյան երեկո

Դասարանական ծնողական ժողովներ (միջնակարգ դպրոց)